«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Առարկան՝ Մայրենի

Հետազոտող ուսուցիչ՝ Ավագյան Նազիկ Սամվելի

Ուսումնական հաստատություն՝ ք.Երևան, հ.179 հիմնական դպրոց

Երևան 2022

Բովանդակություն----------2
1.Ներածություն----------3
2.Թեմայի արդիականությունը----------5
Գլուխ 1. Հայոց ազգային էպոսը ----------6
1.1Սասնա ծռեր ազգային էպոսի նկրագիրը----------6
1.2Հայդուցազունների անպարտելիության ոգին էպոսում--10
1.3«Սասնա ծռերը» ժանրային առանձնահատկությունը--11
Գլուխ2.
2.1Կարողունակությունների և արժեհամակարգի ձևավորման առաջնահերթությունը հայկական էպոսում:----------13
2.2Սովորողների քննադատական մտածողության զարգացումը էպոսի ուսումնասիրության համատեքստում----------
2.3.Էպոսում հայրենասիրական դաստիարակության ձևավորումը որպես արժեհամակարգային առաջնահերթության բաղադրիչ
6.Եզրակացություն----------22

Ներածություն

Կրթությունը անձի, պետության, հասարակության շահերից բխող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու և սերունդներին փոխանցելու համար:

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի մտավոր և հոգևոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը:Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է հանրակրթության բնագավառի զարգացումը որպես անհատի և հասարակության անվտանգության, կայուն զարգացման ապահովման, հայ ինքնության պահպանման կարևոր երաշխիք:

Յուրաքանչյուր ուսուցիչ քաջ գիտակցումով պիտի ընկալի, որ պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է: ՈՒսուցիչը իր գործունեության շնորհիվ, օրենքով սահմանված իրավունքների և պարտավորությունների, մանկավարժական խղճի սահմաններում պիտի դառնա հանրակրթության նպատակների իրագործողը, ապահովելով յուրաքանչյուր սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական, սոցիալական զարգացումը, մարդկային արժանապատվության պահպանումը, իր ընդունակություններին, կարողություններին համապատասխան

ուսումնական միջավայրում նրա հարմարեցմանը, ապագա քաղաքացու ձևավորմանը:Նա պետք է ուղղորդվի այն սկզբունքներով, որի երաշխավորն է պետությունը՝ պահպանելով մարդասիրական բնույթը ազգային, համամարդկային արժեքների, անհատի ազատ և

համակողմանի զարգացման առաջնայնությունը, անհատի իրավունքների,ազատությունների նկատմամբ հարգանքը:Արժանապատ-վությունը,հայրենասիրությունը,աշխատասիրությունը,պատասխանատությունը, հանդուրժողականությունը պիտի դառնան սովորողների կյանքի ուղենիշները:Ժամանկակից դպրոցական ծրագրերը ձգտում են տալ ավելին, քան ավանդական հմտությունները/կարդալ, գրել, կիրառել/:Լավագույն դպրոցական ծրագրերը միտված են աշակերտների մոտ այնպիսի կարողունակությունների, որոնք հնարավորություն կտան ազատ մտածել, գիտելիքներ կառուցել, վերակառուցել, ինքնուրույն ստեղծագործել, թիմերում համագործակցել:Այս ամենի իրագործման գրավականը հանրակրթության մասին օրենքի կարևոր դրույթներից մեկն է, որ պետական քաղաքականության սկզբունքը ուսումնական հաստատություններում սովորողների ստեղծագործական աշխատանքի խթանումն է, նրանց վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների, մեդիագրագիտության օգտագործման, ունակությունների զարգացման առաջնահերթությունը:Կրթության առջև դրված մարտահրավերներից են կարողունակությունների՝սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների, դիրքորոշումների

հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքման ձևերի տիրապետումը: Այս ամենի համադրությունն էլ իր հերթին կհանգեցնի հանրակրթության որակի շարունակական բարելավման միջազգային չափանիշների համապատասխանությանը, միջազգային կրթական համակարգին ինտեգրմանը՝ ձևավորելով այն վերջնարդյունքը, որը դրված է հանրակրթության հիմքում, բխում է նրա կրթադաստիարակչական նպատակներից:

2.Թեմայի նպատակը և արդիականությունը

Ժողովուրդների համար կարևոր նշանակություն ունեն իրենց ազգային խորհրդանիշները, որոնք առանցքային դերակատարն են հանդիսանում սերունդների կրթության և դաստիարակության համար:Թեմայի՝ էպոսի ընտրության արդիականությունը պայմանավորված է արդի հայ հասարակության համար կենսական նշանակություն ունեցող արժեհամակարգի ձևավորմամբ:Այն է, սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի միջոցով նպաստել կարողունակությունների ձևավորմանը, որոնք իրականացվում են սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից:

Էպոսի ուսումնասիրության միջոցով աշակերտների մեջ պետք է.

** ձևավորել մշակութային, ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություններ:*

** սովորողների մոտ ձևավորել հայ մշակույթն ու համամարդկային քաղաքակրթությունների մշակութային բաղադրիչները ճանաչելու հմտություններ՝ որպես մարդկային զգացմունքների և գործողությունների կողմնորոշիչներ:*

**Էպոսի ուսումնասիրության միջոցով արժևորել սեփական ինքնությունը, ընտանիքի, համայնքի, պետության դերը:*

** ձևավորել և զարգացնել Հայաստանի աշխարհագրության, պատմության, հասարակական, քաղաքական համակարգի հիմնարար իմացություն:*

**Աշակերտների մոտ ձևավորել սեփական նախասիրություններ ազգային և համաշխարհային մշակութային ժամանակաշրջանների վերաբերյալ:*

** զարգացնել սեփական մշակութային ու գեղագիտական պատկերացումները՝ արժևորելով հոգևոր և նյութական ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը, ճանաչելով հայ և համաշխարհային գրականությունն ու արվեստը՝ ձևավորելով մշակութային գրագիտություն և ճաշակ:*

** ձևավորել սովորողների ինքնաճանաչողության և սոցիալական կարողունակություններ, որի արդյունքում ընդունակ կլինեն*

ինքնաանդրադարձման և ինքնակազմակերպման միջոցով ձգտել ինքնաճանաչման:

**Նպաստել սովորողների ժողովրդավարության, ազատության, բարեվարքության, սոցիալական արդարության, իրավական պետության գաղափարի վրա հենվող հասարակության զարգացմանը, ազգային ինքնագիտակցության ձևավորմանը:*

**Նրանց մոտ ճանաչողության միջոցով ձևավորել սեր հայրենիքի հանդեպ:*

Գլուխ 1. Հայոց ազգային էպոսը

1.1Սասնա ծռեր ազգային էպոսը նկրագիրը

1964 թ-ին աշխարհի վիպերգերի միջազգային մրցույթում «Սասնա ծռերը» ճանաչվել է լավագույնը



Էպոսը հայ ցեղի ապրած կյանքի և հոգեկան կարողությունների հոյակապ զանձարան են է ու իր մեծության անհերքելի վկայությունն է ախարհի առջև»

Հովհաննես Թումանյան

Ազգային էպոսը նկրագրում է տվյալ ազգի կամ էթնոսի ծագումը, զարգացումը և պատմությունը: Այն նաև օգնում է փոխանցել ազգի ինքնորոշման կամ ինքնաճանաչման դրվագները և բազմաթիվ ազգային խորհրդանիշների առաջացման պատմությունը:

Հայկական մշակույթում «Սասնա ծռեր» ազգային էպոսն առանձնահատուկ տեղ է գրավում: Այն ծնունդ է առել Հայկական լեռնաշխարհի ամենագողտրիկ անկյուններից մեկում՝ Սասունում: Սասունը պատմական Մեծ Հայքի Աղձնիք նահանգի տասներորդ գավառն է, որը տարածվում է Հայկական Տավրոս լեռների վրա: Սասունը լեռնային երկրամաս է, որի տարածքում են գտնվում հայտնի Ծովասար և Մարաթուկ լեռնագագաթները: Սասունցիներն աչքի են ընկել միայն իրենց տեսակին հատուկ համառությամբ, հայրենիք ու հող պաշտելով և մի փոքր էլ «ծուռ» լինելով:

Սասունցի Դավիթ

Հայոց ազգային էպոսը փոխանցվել է բանասացների և վիպասացների միջոցով՝ տարբեր պատումների ձևով: Ինչպես, օրինակ՝ տարոնցի երեսփոխան Կրպոյից Գարեգին Սրվանձտյանը գրի է առել և այնուհետև 1874 թ-ին հրատարակել «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» վերնագրով էպոսի պատումներից մեկը: Այնուհետև մոկացի Նախո Քեռի-ից 1889թ-ին Մանուկ Աբեղյանը գրի է առնում մեկ այլ տարբերակ և հրատարակում «Դավիթ և Մհեր» վերնագրով:

1939 թ-ին՝ վիպերգի ստեղծման 1000-ամյակի առթիվ, 60 պատումների հիման վրա կազմվել է միասնական, համահավաք բնագիր (հեղինակներ՝ Մանուկ Աբեղյան, Գևորգ Աբով, Արամ Ղանալանյան), որն ամբողջական և հստակ պատկերացում է տալիս էպոսի մասին:

Հայկական էպոսը ստեղծվել է միջնադարում՝ արաբական արշավանքների ժամանակ:

Էպոսի գաղափարական ոգին հայ ժողովրդի հերոսական մաքառումն է թշնամիների դեմ՝ հանուն ժողովրդի ազատության և անկախության,

հայրենիքի և պետականության պահպանման:

«Սասնա ծռերը» բաղկացած է վիպական 4 մասից կամ ճյուղից, որոնցից յուրաքանչյուրը կոչվում է հերոսների մեկ սերնդի անունով՝ «Սանասար և Բաղդասար», «Մեծ Մհեր», «Սասունցի Դավիթ» և «Փոքր Մհեր»:

«Սանասար և Բաղդասար»: Հայոց Գագիկ թագավորը հարկատու էր Բաղդադի կռապաշտ խալիֆին: Վերջինս, լսելով արքայադստեր՝ Ծովինարի գեղեցկության մասին, ցանկանում է կնության առնել նրան, բայց մերժվում է: Կատաղած խալիֆն սկսում է ավերել Հայոց երկիրը: Ծովինարը որոշում է հոժարակամ դառնալ կռապաշտի կինը, որպեսզի հայրենիքը փրկի ավերումից:

Հայրենի լեռներում շրջելիս նա ծարավում է և Աստծուց ջուր է աղերսում: Հանկարծակի բխած Կաթնաղբյուրից Ծովինարը մի լիքը և մի կիսատ բուռ ջուր է խմում ու հղիանում: Հետո նա մեկնում է Բաղդադ: Որոշ ժամանակ անց ծնվում են Սանասարն ու Բաղդասարը, որոնք օրեցօր մեծանում են ու հզորանում: Խալիֆն ուզում է սպանել եղբայրներին, բայց նրանք են սպանում խալիֆին և իրենց մոր հետ փախչում գալիս են հայրենիք, հիմնում իրենց բերդը՝ Սասունը, հզորացնում ու շենացնում այն: Սանասարն ամուսնանում է Դեղձուն-Ծամի հետ: Ունենում են 3 զավակ՝ Միհրը, Ձենով Օհանը և Վերգոն:

«Մեծ Միհր»: Սանասարին հաջորդում է որդիներից ամենաքաջը՝ Միհրը: Այդ տարիներին Սասունը հարկատու էր Մըսրա Մելիքին: Չափահաս դառնալով՝ Միհրը տիրություն է անում երկրին ու ժողովրդին. հացի ճանապարհը փակող հսկա առյուծի երախը պատռելով՝ երկու կես է անում, որի համար նրան անվանում են Առյուծաձև Միհր, Սպիտակ Դևից ազատում է գեղեցկուհի Արմաղանին ու ամուսնանում նրա հետ, մենամարտում հաղթում է Մըսրա Մելիքին և Սասունն ազատում հարկերից, հիմնում է Մարութա Բարձրիկ Աստվածածինը, Ծովասարը դարձնում իր որսատեղին, շինում բերդեր ու կամուրջներ:

Մըսրում մեռնում է Մելիքը: Նրա կինը՝ Իսմիլ Խաթունը, խնդրում է Միհրին գալ և տեր կանգնել իր երկրին՝ գաղտնի մտադրություն ունենալով ժառանգ ունենալ նրանից: Ծնվում է արու զավակ, որին Իսմիլ Խաթունը կոչում է Մելիք՝ ի հիշատակ մեռած ամուսնու: 7 տարի նա Միհրին պահում է իր մոտ՝ արբեցնելով թունդ գինով: Ի վերջո սթափվելով և զգալով իր սխալը՝ Միհրը վերադառնում է Սասուն: Արմաղանը դժվարությամբ ներում է նրան: Միհրը նորից շենացնում է Սասունը: Որոշ ժամանակ անց Արմաղանը ծնում է մի տղա, որին անվանում են Դավիթ: Երեխայի ծնվելուն պես Միհրն ու Արմաղանը, պայմանի համաձայն, մեռնում են:

«Սասունցի Դավիթ»: Որբացած նորածին Դավթին ուղարկում են Մըսր՝ Իսմիլ Խաթունի մոտ, որտեղ քաջազունը մեծանում է ժամ առ ժամ: Մըսրա Մելիքը փորձում է խորամանկությամբ սպանել Դավթին, բայց պատանի դյուցազնը հաղթահարում է բոլոր փորձությունները և վերադառնում Սասուն: Ձենով Օհանը Դավթին կարգում է գառնարած, ապա՝ նախրապան, որսորդ: Դավիթն սպանում է Սասունը կողոպտած դևերին և երկրի ամբարները լցնում բարիքներով, միայնակ կոտորում է Մըսրա Մելիքի զորքին, վռնդում է նաև հարկահավաք Կոզբադինին: Մելիքը բազմահազար զորքով ինքն է արշավում Սասուն: Դավիթը սրի մեկ հարվածով երկու կես է անում խոր հորի մեջ թաքնված Մըսրա Մելիքին:

Սասունն ազատագրելուց հետո Դավիթը նշանվում է Չմշկիկ Սուլթանի հետ, բայց լսելով

Կապուտկողի արքայադուստր Խանդութի գեղեցկության մասին՝ մի շարք

քաջագործություններից հետո ամուսնանում է նրա հետ: Ապա գնում է Գյուրջիստան ևտարի մնում այնտեղ: Խանդութը ծնում է արու զավակ և անունը դնում Մհեր: Չափահաս դառնալով՝ նա որոշում է գնալ և գտնել հորը: Ճանապարհին հայր ու որդի հանդիպում են և, իրար չճանաչելով, մենամարտում: Դավիթը Մհերի բազկապանից ճանաչում է որդուն, չի ներում, որ նա հանդգնել է մենամարտել իր հետ և անիծում է. «Անմա՛հ ըլնես, անժառա՛նգ»: Դավիթն սպանվում է Չմշկիկ Սուլթանի աղջկա թունավոր նետից, իսկ ամուսնուն հավատարիմ Խանդութը ցած է նետվում բերդի գլխից:

«Փոքր Մհեր»: Դավթին փոխարինած Փոքր Մհերը պատերազմում է թշնամիների դեմ և հաղթում, սպանում է Չմշկիկ Սուլթանին՝ լուծելով հոր վրեժը: Ապա ամուսնանում է գեղեցկուհի Գոհարի հետ: Բայց կատարվում է հոր անեծքը. Մհերը մնում է անժառանգ: Մեռնում է Գոհարը: Հողն այլևս չի դիմանում Մհերի ոտքերի տակ: Սասնա վերջին քաջազունը փակվում է Ագռավաքար ժայռի մեջ՝ պատգամելով.

Քանի աշխարք չար է,
Հողն էլ դալբցեր (ծուլացել) է,
Մեջ աշխարքին ես չեմ մնա:
Որ աշխարք ավերվի, մեկ էլ շինվի,
Երբոր ցորեն էղավ քանց մասուր մի,
Ու գարին էղավ քանց ընկուզ մի,
Էն ժամանակ հրամանք կա,
որ էլնենք էդտեղեն:

Քանի որ էպոսում հզոր ժառանգի թեման ունի հորինվածքային կարևոր արժեք, որով պայմանավորված են վիպական սերնդափոխությունը, ճյուղերի փոխադարձ կապը և հաջորդականությունը, ապա Փոքր Մհերի անժառանգ մնալով ավարտվում է նաև հերոսավեպը:

1.2 Հայ դյուցազունների անպարտելիության ոգին էպոսում

«Սասնա ծռերի» վիպական համակարգում միաձուլված են վերամշակված ու փոխակերպված հնագույն առասպելները, ավանդական վիպական սյուժեները, հեթանոսական պաշտամունքային տարրերը (ջուր, արեգակ), պատմական երգ-զրույցները: Այդուհանդերձ, էպոսի վիպական զարգացումը, ճյուղերի հստակեցումը, վերամշակումը կատարվել են միջնադարում՝ VII–XIII դարերում, նախ՝ Բաղդադի արաբական խալիֆության, ապա՝ Եգիպտոսի (Մըսրա) Էյուբյան արաբ տիրակալների դեմ XII–XIII դարերում հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի ազդեցությամբ:

Էպոսի հերոսներից (նաև բացասական) շատերն ունեն իրենց պատմական նախատիպերը:

«Սասնա ծռերի» ամենաբնորոշ գիծը հայ դյուցազունների անպարտելիության ոգին է՝ պայմանավորված էպոսի նախահիմքում ընկած առասպելական հերոսների սխրանքներով և ոսոխների, հատկապես արաբական բռնակալության դեմ հայ ժողովրդի մղած դարավոր պայքարով:

Իր սիրելի հերոսներին ժողովուրդն անվանել է «ծռեր», այսինքն՝ խենթ քաջեր: Նրանք աչքի են ընկնում գեղեցկությամբ, դյուցազնական ուժով ու զորությամբ, որ ստանում են մայր բնությունից, հայրենի հողից ու ջրից: Սանասարը զորություն է առնում Վանա ծովից, այնտեղից հանում է իր ձին՝ Քուռկիկ-Ջալալին, զենքն ու զրահը՝ Թուր Կեծակին, Թամքը սադաֆին, Կապան ղադիֆեն և Խաչ Պատերազմին և այլն, որոնք փոխանցվում են սերնդեսերունդ:

Էպոսի առասպելական հերոսներն օժտված են մարդկային վեհ հատկանիշներով՝ պատվասիրությամբ, մարդասիրությամբ, ազատասիրությամբ, ունեն նաև թուլություններ՝ պարզամտություն, դյուրահավատություն: Սասնա քաջերը վեհանձն են ու շիտակ, նրանք կառուցող-շինարարներ են, հմուտ որսորդներ, անվեհեր մարտիկներ՝ պատրաստ մեռնելու իրենց հողի ու ժողովրդի համար: Սասնա հերոսները որքան էլ ատում են բռնությունն ու ստրկությունը, որքան էլ ցասումով են կռվում թշնամիների դեմ, բայց ամենևին դաժան ու անհոգի չեն:

Սասնա ծռերի առաքինությունները կատարելության են հասցված Դավթի կերպարում, որին ժողովուրդը դարձրել է իր իդեալ հերոսը:

Էպոսի գլխավոր հերոսուհիներին նույնպես ժողովուրդն օժտել է առանձնահատուկ գծերով. նրանք գեղեցիկ են, խոհեմ, զգայուն, պարկեշտ ու միշտ պատրաստ են իրենց կյանքը զոհելու հայրենիքի և ընտանիքի համար: Վիպերգի կանայք նաև խիզախ են ու մարտնչող («Ինչպես որ Դավիթ՝ քաջ, խորոտ մարդ էր, Խանդութ՝ թե՛ խորոտ էր, թե՛ քաջ էր»): Հայ ժողովուրդը չի ստորադասել կնոջը տղամարդուց. «Առյուծն՝ առյուծ է, էղնի էգ, թե որձ»:

Էպոսում գլխավոր հերոսների կողքին տեսնում ենք ժողովրդի իմաստությունը մարմնավորող Քեռի Թորոսին, Ձենով Օհանին, արտատեր պառավին, արաբ ծերունուն և այլ տարեց մարդկանց, որոնք իրենց խրատներով օգնում են Սասնա քաջերին:

«Սասնա ծռեր» վիպերգը բանասացների միջոցով տարբեր պատումներով անցել է սերնդեսերունդ և հասել է մեզ: Նրա մասին առաջին անգամ հիշատակել են XVI դարի պորտուգալացի ճանապարհորդներ Տենրեյրոն և Աֆոնսոն:

Էպոսի պատումներից մեկն առաջին անգամ 1873 թ-ին գրի է առել Գարեգին Սրվանձտյանցը տարոնցի երեսփոխան Կրպոյից և 1874 թ-ին հրատարակել «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» վերնագրով: Մեկ այլ տարբերակ՝ «Դավիթ ու Մհեր», 1889 թ-ին հրատարակել է Մանուկ Աբեղյանը (ասացող՝ մոկացի Նախո քեռի):

Ցայսօր հայտնաբերվել և գրառվել է շուրջ 160 պատում՝ «Սասունցի Դավիթ», «Սասնա փահլևաններ», «Սասնա տուն», «Ջոջանց տուն», «Թլոլ Դավիթ», «Դավթի պատմություն», «Դավթի հեքիաթ» և այլ վերնագրերով: Դրանք գրառված են XIX–XX դարերում և կառուցվածքով, լեզվաբարբառային ու վիպական ներքին հատկանիշներով բաժանվում են տիպաբանական-տեղագրական 3 մեծ խմբերի՝ Սասնա, Մշո և Մոկաց: Ենթադրվում է, որ նախնական պարզ ու կուռ տիպը եղել է Սասնա խումբը, որի տարածումից ու տեղական մշակումներից էլ առաջացել են մյուսները:

1.3«Սասնա ծռերը» ժանրային առանձնահատկությունը

«Սասնա ծռերը» ժանրային առումով խոսքային-երաժշտական վիպերգ է: Էպոսի եղանակավոր հատվածներից հայտնի են Կոմիտասի, Սպիրիդոն Մելիքյանի, Արամ Քոչարյանի և ուրիշների՝ գլխավորապես Մոկաց խմբի պատումներից գրառված 30-ից ավելի կտորներ (կան նույն երգի տարբերակներ), որոնք կարևոր են նաև ազգային մոնոդիկ (միաձայն երգեցողություն կամ գործիքային նվագ) երաժշտության ձևավորման ու զարգացման պատմության ուսումնասիրման համար:

«Սասնա ծռերը», դարեր շարունակ ավանդվելով բանավոր, ներառել և գեղարվեստորեն համադրել է հայ ժողովրդի տարբեր դարաշրջանների նյութական ու հոգևոր կյանքի կարևոր իրողությունները, դարձել պատմամշակութային արժեքավոր հուշարձան:

1939 թ-ին վիպերգի ստեղծման 1000-ամյակի առթիվ 60 պատումների հիման վրա կազմվել է միասնական, համահավաք բնագիր (հեղինակներ՝ Մանուկ Աբեղյան, Գևորգ Աբով, Արամ Ղանալանյան), որն ամբողջական և հստակ պատկերացում է տալիս էպոսի մասին:

Էպոսի համահավաք տեքստը թարգմանվել է ռուսերեն, վրացերեն, ադրբեջաներեն, բելոռուսերեն, չինարեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, պարսկերեն, լեհերեն և այլ լեզուներով:

«Սասնա ծռերն» ունեցել է բազմաթիվ գրական մշակումներ, որոնցից լավագույնը Հովհաննես Թումանյանի «Սասունցի Դավիթ» (1903 թ.) անավարտ պոեմն է: «Սասնա ծռերն» ամբողջական կամ մասնակի մշակել են նաև Ավետիք Իսահակյանը, Եղիշե Չարենցը, Սողոմոն Տարոնցին, Վիգեն Խեչումյանը, Հմայակ Սիրասը, Մկրտիչ Խերանյանը, Նաիրի Զարյանը և ուրիշներ: Էպոսին բազմիցս անդրադարձել են կերպարվեստում (Հակոբ Կոջոյան, Երվանդ Քոչար, Միհեր Աբեղյան, Հրայր Իսաբեկյան, Արտաշես Հովսեփյան և ուրիշներ), երաժշտության մեջ (Գևորգ Բուդաղյանի «Խանդութ» երաժշտական կոմպոզիցիան՝ ըստ Ալեքսանդր Սպենդիարյանի երաժշտության, Էդգար Հովհաննիսյանի «Սասունցի Դավիթ» բալետ-օպերան և այլն), կինոարվեստում («Սասնա ծռեր», ռեժիսոր՝ Արման Մանարյան, 2010 թ., մուլտֆիլմ), թատրոնում:

Երկրորդ աշխարհամարտի (1939–45 թթ.) տարիներին սփյուռքահայերի հանգանականությամբ ստեղծվել է «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը, Ղարաբաղյան պատերազմի տարիներին կազմավորվել են «Սասնա ծռեր» և «Սասունցի Դավիթ» կամավորական ջոկատները:

ՀՀ-ում էպոսի հերոսների անուններով կոչվել են տեղանուններ, մետրոպոլիտենի կայարան՝ «Սասունցի Դավիթ»՝ Երևանում:

Հովհաննես Թումանյան,

«...ամեն մի ժողովուրդ չունի համաշխարհային գրականության մեջ իր ազգային էպոսը: Հայկական էպոսը հայ ցեղի ապրած կյանքի ու հոգեկան կարողությունների հոյակապ գանձարանն ու իր մեծության անեղելի վկայությունն է աշխարհքի առջև»:

Նաիրի Զարյան,

«Սասնա Դավիթը» մեր ազգային հոգևոր մեծագույն հարստությունն է, որի մեջ արտահայտվում են ժողովրդի նվիրական խոհերն ու երազանքները, մեր դարավոր պայքարը հանուն ազատության, մեր ազգային կենցաղը, մեր բնավորությունը, մեր ոճն ու ոգին: Այս վեպը գրվել է հազար տարի շարունակ: Ժողովուրդը բերնեբերան այն պատմել է և հորինել, հարմարեցրել նոր ժամանակներին, հարստացրել նոր դրվագներով ու գաղափարներով, ամեն ասացող, ըստ իր շնորհքի ու հասկացության, մի բան է ավելացրել իր սովորածին, և այսպիսով, «Սասնա Դավիթը» դարձել է ժողովրդական հանճարի մի անգերազանցելի մարմնացում»:

Գլուխ2

2.1Կարողունակությունների և արժեհամակարգի ձևավորման առաջնահերթությունը հայկական էպոսում:

Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են:Հանրակրթական տարրական, հիմնական և միջնակարգ ծրագրերի սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները նկարագրում են , թե հանրակարթական հօիմնական ծրգրերի կրթական աստիճանների ավարտին սովորողը ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա;Վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը:

2.2Սովորողների քննադատական մտածողության զարգացումը էպոսի ուսումնասիրության համատեքստում

Հետազոտական աշխատանքի ուսումնասիրության ընթացքում կարևորել եք նաև քննադատական մտածողությունը, որովհետև էպոսական վառ, անքննելի, հետաքրքիր, տիեզերական և երկրային աառանձնահատկություններով օժտված հերոսների կերպարները տալիս են այդ հնարավորությունը՝ համեմատությունների,հակադրությունների, համադրությունների այլևայլ մեթոդների կիրառման շնորհիվ զարգացնել տրամաբանական և քննադատական մտածողությունը:

Քննադատական մտածողությունն իրենից ներկայացնում է տեղեկատվությունը վերահմաստավորելու և ձևավորելու բարդ գործընթաց, որը կատարվում է գաղափարներն ու միջոցները ստեղծագործաբար համադրելու միջոցով: Դրա կիրառումը հնարավոր է բոլոր տարիքներում: Երբեմն կարծիք է հնչում, որ միայն ավագ դպրոցի աշակերտները կարող են ներգրավվել այդ գործընթացում: Սա բավականին սխալ պատկերացում է: Կրտսեր դպրոցի երեխաները ևս պատրաստակամորեն են մասնակցում բարդ խնդիրների լուծում պահանջող առաջադրանքների կատարմանը և ընդունակ են դրսևորել որոշումներ կայացնելու կարողության բարդ մակարդակ: Չէ՞ որ գիտելիքն արժեքավոր է, երբ այն կիրառելի է և ընկալված է հիմնավորապես: Ապագան պատկանում է նրանց, ովքեր կկարողանան տեղեկատվությունը քննադատաբար վերլուծել և կերտել սեփական ճշմարտությունը:

Քննադատական մտածողությունը ինքնուրույն մտածողություն է: Քննադատորեն մտածող մարդն առանց քննարկելու, բանավիճելու այնքան էլ հաճախ չի կիսում մեկ ուրիշի տեսակետը: Նա կարողանում է մտածել և ինքնուրույն, ազատ ու անկաշկանդ արտահայտել իր կարծիքները:

Քննադատական մտածողությունը ուսուցման համակարգում նոր մոտեցում է, որը վերջին տարիներին լայն տարածում է գտել: Այս մոտեցումը միաժամանակ հին պատմական արմատներ ունի: Հայտնի են Սոկրատեսի առաջարկած հարցադրումների մեթոդը, Պլուտարքոսի և Մ. Ֆ. Քվինթիլիանոսի զարգացրած մոտեցումն, ըստ որի՝ Աշակերտը ոչ թե սափոր է, որ պետք է լցնել գիտելիքներով, այլ ջահ է, որը պետք է վառել:

Քննադատական մտածողությունը մտածելու մի եղանակ է, որը պահանջում է կարդալ, ընկալել տրված նյութը, որից հետո մտածել դրա մասին, վերլուծել, համեմատել, գնահատել, գտնել այդ նյութի կապը կյանքի հետ, կյանքում դրա կիրառման հնարավորությունը:

Քննադատական մտածողության զարգացման մեջ մեծ ավանդ ունեն ամերիկյան մանկավարժներ Ջինի Լ. Սթիլը, Քուրթիս Ս. Մերեդիթը, Չարլզ Թեմփլը և այլոք:

Քննադատական մտածողություն եզրույթն առաջին հայացքից բացասական երանգ է պարունակում, քանզի այն զուգորդվում է քննադատել բառին: Սակայն այս բառը ներառում է քննել և դատել բառ-հասկացությունները: Այսինքն, իմաստն է՝ որևէ հարց քննել, զննել տարբեր տեսանկյուններից, ապա դատել և եզրահանգում կատարել:

Քննադատական մտածողությունը մտավոր բարդ գործընթաց է, որն սկսվում է տեղեկատվությամբ և ավարտվում որոշման կայացմամբ: : Քննադատական մտածողությունը մտածելու մի եղանակ է, որը պահանջում է կարդալ, ընկալել տրված նյութը, որից հետո մտածել դրա մասին, վերլուծել, համեմատել, գնահատել, գտնել այդ նյութի կապը կյանքի հետ, կյանքում դրա կիրառման հնարավորությունը: Քննադատական մտածողության զարգացման մեջ մեծ ավանդ ունեն ամերիկյան մանկավարժներ Ջինի Լ. Սթիլը, Քուրթիս Ս. Մերեդիթը, Չարլզ Թեմփլը և այլոք: Քննադատական մտածողություն եզրույթն առաջին հայացքից բացասական երանգ է պարունակում, քանզի այն զուգորդվում է քննադատել բառին: Սակայն այս բառը ներառում է քննել և դատել բառ-հասկացությունները: Այսինքն, իմաստն է՝ որևէ հարց քննել, զննել տարբեր տեսանկյուններից, ապա դատել և եզրահանգում կատարել և ունենալ վերջնարդյունք, որը բխում է մեր նպատակներից:

Այսօր Հայաստանի կրթական բարեփոխումներով շահագրգիռ մանկավարժները լուրջ որոնումների մեջ են: Դրանք հիմնականում նպատակաուղղված են դասավանդման արդյունավետությունը բարձրացնող նոր մեթոդների, հնարների, եղանակների հայտնագործմանը և գործնականում կիրառելու խնդիրներին: Համաշխարհային մանկավարժության մեջ արդեն կան որոշակի նվաճումներ, որոնք հասանելի են նաև հայ ուսուցչին և հաջողությամբ կարող են գործադրվել մեզանում: Նման նորարական մեթոդների և գործելակերպի մի համակարգ է Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով /ՔՄԶԿԳՄ/ ծրագիրը:

Այս ծրագրի նպատակն է՝ կրթել և դաստիարակել արժանավոր քաղաքացիներ՝ այսինքն՝ գործունյա, քննադատաբար մտածող անհատներ, որոնք ի զորու են լինելու ճիշտ կողմնորոշվել ժամանակակից կյանքի ամենաբարդ իրավիճակներում, ազատ ու անկաշկանդ հայտնել

սեփական կարծիքները, ուշադիր ու հանդուրժող լինել այլոց կարծիքների

հանդեպ և վստահաբար ստանձնել որոշումներ կայացնելու պատասխանատվությունը:Իսկ մեր էպոսը տալիս է անեզր հնարավորություններ հասնելու քննադատական մտածքղության զարգացմանը, որի արդյունքում աշակերտները կկարողանան իրատեսորեն նայել աշխարհին ու մարդկանց, կունենան այն հիմնարրար ունակությունն երն ու հմտությունները, որոնք կիրարկելի կլինեն առօրյայում և ողջ կյանքի ընթացքում:

Այսօր հաճախ է շեշտվում այն մոտեցումը,որ դպրոցի նպատակը միայն գիտելիքի տրամադրումը չէ:Այսօր դպրոցն ունի առավել բարդ առաքելություն՝ ձևավորել սերունդ, որն ունի ինքնուրույնություն, քննադատաբար մտածելու անհրաժեշտություն իրական կյյանքում գոյություն ունեցող խնդիրների շուրջ:Քննադատական մտածողությանը նպաստող հմտությունների զարգացումը կարևորում է ժողովրդավարական հասարակության ձևավորման և ժողովրդական արժեքների պահպանման տեսանկյունից:Քննադատական մտածողությունն իրենից ներկայացնում է տեղեկատվությունը վերամիմաստավորելու և ձևավորելու բարդ գործընթաց, որը կատարվում է գաղափարներն ու միջոցները ստեղծագործաբար համադրելու միջոցով: Դրա կիրառումը հնարավոր է բոլոր տարիքներում: Երբեմն կարծիք է հնչում, որ միայն ավագ դպրոցի աշակերտները կարող են ներգրավվել այդ գործընթացում: Սա բավականին սխալ պատկերացում է:

Կրտսեր դպրոցի երեխաները ևս պատրաստակամորեն են մասնակցում բարդ խնդիրների լուծում պահանջող առաջադրանքների կատարմանը և ընդունակ են դրսևորել որոշումներ կայացնելու կարողության բարդ մակարդակ: Գիտելիքն արժեքավոր է, երբ այն կիրառելի է և ընկալված է

հիմնավորապես: Ապագան պատկանում է նրանց, ովքեր կկարողանան

տեղեկատվությունը քննադատաբար վերլուծել և կերտել սեփական ճշմարտությունը:Քննադատական մտածողությունը ինքնուրույն մտածողություն է: Քննադատորեն մտածող մարդն առանց քննարկելու, բանավիճելու այնքան էլ հաճախ չի կիսում մեկ ուրիշի տեսակետը: Նա կարողանում է մտածել և ինքնուրույն, ազատ ու անկաշկանդ արտահայտել իր կարծիքները:Քննադատական մտածողությունը ուսուցման համակարգում նոր մոտեցում է, որը վերջին տարիներին լայն տարածում է գտել: Քննադատական մտածողությունը միաժամանակ հին պատմական արմատներ ունի: Հայտնի են Սոկրատեսի առաջարկած հարցադրումների մեթոդը, Պլուտարքոսի և Մ. Ֆ. Քվինթիլիանոսի զարգացրած մոտեցումն, ըստ որի՝ աշակերտը ոչ թե սափոր է, որ պետք է լցնել գիտելիքներով, այլ ջահ է, որը պետք է վառել:

2.3.Էպոսում հայրենասիրական դաստիարակության ձևավորումը որպես արժեհամակարգային առաջնահերթության բաղադրիչ

Արժեքները դիտարկվում են որպես իդեալներ, որպես դրական նշանակություն և դրական արդյունք:Արժեքային հասկացություններ են արժեքային իդեալները, արժեքային պատկերացումները, արժեքային ուղղվածությունը, որոնք համարվում են միմյանց լրացուցիչներ:Ընդհանուր արժեքների ճանաչումն ու ընդունումը աճող սերնդին ազգային ու համամարդկային մշակույթի յուրացման հնարավորություն է ընձեռում:

Արժեհամակարգային տարբեր բաղադրիչներ են իրենց մեջ կրում էպոսի կերպարները՝ թե դրական, թե բացասական, որտեղ վեր են հառնում բարությունն ու չարությունը, ազնվությունն ու խարդախությունը, վախկոտն ու խիզախը, խորամանկն ու միամիտը, արժանապատիվ հայրենասերն ու հպատակ վախկոտը:Մարդը գտնվում է անընդհատ փոփոխվող աշխարհում: Յուրաքանչյուր մարդ ունի շրջապատի իր սեփական ընկալումը:Մարդու ներաշխարհը դրսից որևէ մեկի կողմից չի կարող

մինչև վերջ ճանաչվել:Մարդը շրջապատող միջավայրին վերաբերվում է իր սեփական ընկալման և ըմբռնման տեսանկյունից:Մարդը ձգտում է ինքնաիրացման և ինքնակատարելագործման

Կրտսեր դպրոցականի յուրաքանչյուր դասի, առարկայի կարևորագույն և անքակտելի բաղկացուցիչն է անձի ձևավորման արժեքային կողմնորոշումների ազդեցությունն ու դերակատարումը, որը փորձելու ենք վեր հանել էպոսի դասավանդման և յուրացման արդյունքում:

Անհիշելի ժամանակներից արժևորվել է կրթության դերն ու նշանակությունը որպես հասարակության զարգացման, լուսավորման, առաջընթացի գրավական:Հայ հասարակությունը, հայ ժողովրդը ընդմիշտ կարևորել է կրթության դերանշանակությունը:Վեցդարյա պետականազրկության և 70-ամյա խորհրդային իշխանապետության երկարաձիգ տարիների ընթացքում մեր ժողովուրդը կրել է բազում զրկանքներ, կորուստներ, կարևորագույն արժեքներ մթագնվել են ու ետ մղվել:Այսօրվա սրբագույն ձեռքբերումը Հայաստանի Հանրապետության անկախությունն է: Նորանկախ երկրի կառուցակազմման գլխավոր հենասյուններից է կրթությունը, որն իրականացվում է կրթական համակարգի միջոցով, նրա կարևոր մասն է հանրակրթությունը, որում ներառված է կրտսեր դպրոցը:Կրտսեր դպրոցին ներկայացվող պահանջներն ավելի պարտավորեցնող են, նպատակային ու առաջնահերթ:Մենք չենք կարող ունենա կայուն, որակյալ, մրցունակ բարձրագույն կրթական համակարգ, զարգացած հասարակություն, եթե չարժևորվի կրտսեր դպրոցի դերակատարությունը և նրա դերի բարձրացումը:Արդի հայ կրթական համակարգում յուրաքանչյուր ներկայացուցիչ պետք է գնահատի, կարևորի, արժևորի առաջին հերթին ինքն իրեն, կրելով մեծ պատասխանատվություն թե դպրոցի, թե պետության, թե ընտանիքի, թե սովորողի, թե իր խղճի առջև:Այսօր, առավել քան երբևէ, կարևորվում է հայ մանկավարժի ազգային բարոյական կերպարը՝ կրթելու, դաստիարակելու պետական, իրավական, քաղաքացիական, կրոնական մտածելակերպով ինքնավստահ, արժանապատիվ հայ քաղաքացիներ:ՈՒսուցման գործընթացի յուրաքանչյուր բաղադրատարր պետք է լինի հստակեցված և նպատակաուղղված:Գիտելիքների,կարողությունների, հմտությունների ձեռքբերման հետ կարևորվում է կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորումը,

դիրքորոշումն ու վերաբերմունքը ուսումնասիրվող նյութի տիրույթում և նրա հետ փոխկապակցվող առարկաների համատեղելիությամբ: Դրանով է պայմանավորված

նաև ուսուցման գործընթացի բարդությունը, բազմաբովանդակությունը, շարունակականությունն ու արդյունավետությունը:

Հայ մանուկի հայրենասիրական դաստիարակությունը կարևորագույնն է, հայ երեխան կրտսեր տարիքից պետք է ականջալուր լինի ազգային ու համամարդկային արժեքներին:Առաջին հերթին էպոսի միջոցով պետք է կրթել ու դաստիարակել, բարձրացնել հայրենասիրական ոգին, քանզի առանց հայրենասիրության փակ են դեպի համամարդկայինը տանող ճանապարհները:Երեխան պիտի սիրի իր հայրենիքը, որը համատեղվում է հայրենի բնության, հայրենի հողի, այդ հողում ապրողի նկատմամբ, իր ազգակցի, իր արյունակցի, որոնք ներկայանում են որպես ծնող, քույր, եղբայր, ընկեր, հարևան, բարեկամ, համաքաղաքացի, համագյուղացի, դասընկեր, ուսուցիչ, զինվոր, բժիշկ,արվեստագետ:Էպոսում յուրաքանչյուր կերպար պետք է իր ասելիքն ու անելիքը ունենա աշակերտների գիտակցության ձևավորման գործում:

Հայրենասիրական դաստիարակությունը ձևավորում է հայկականության արժեհամակարգ և ճանապարհ հարթում դեպի համամարդկային արժեքներ:Ազգային մտածելակերպի, հայկական ինքնության հստակ գիտակցության ամրակայման դեպքում մենք կարող ենք վստահել նրանց այլ մշակութային տիրույթներում, որտեղ նրանք կլինեն ներկայանալի, մրցունակ, այլ մշակույթները կներդաշնակեն ազգայինին ՝ չկորցնելով հայի կերպարն ու տիպականությունը:

Այսպիսով՝ կրթության նկատմամբ արժեքային մոտեցման հիմքում հումանիզմն է և բարոյական սկզբունքները:

Արժեքային մոտեցումը իր արտացոլումն է գտնում կրթական նպատակների մեջ:Կրթության նպատակն ամբողջությամբ ուղղված է մարդու անձնային զարգացմանը, մարդու իրավունքների և ազատությունների նկատմամբ հարգանքի մեծացմանը, պետք է մեծ ուշադրություն դարձնել դպրոցի կրթության բովանդակությանը, որն իր մեջ կրում է այնպիսի բնորոշումներ, ինչպիսիք են պատասխանատվությունը, վստահելիությունը, հանդուրժողականությունը:

Դպրոցի արդյունավետության մակարդակը պետք է սահմանվի աշակերտների ոչ միայն

առաջադիմության, այլ անձնային բնորոշումների զուգակցմամբ:Պետք է հաշվի առնվի ոչ միայն բարձր գնահատականը, այլ անձնային որակները:Այսօր կրթությունը համարվում է համընդհանուր արժեք:Կրթական համակարգի ամենակարևոր արժեքաբանական նպատակը հասարակության մեջ կյանքի համար անհրաժեշտ կարողությունների ու հմտությունների զարգացումն է, որոնք ձևավորվում են գիտելիքների հիման վրա: Արժեքները փոխանցվում են կրթության գործընթացում: Ինչպես նշեցինք այսօր դպրոցներում, կրթական ծրագրերում շեշտադրվում են հումանիստական արժեքները, որոնցում էլ առաջնահերթություն է տրվում ազնվությանը, աշխատասիրությանը, մարդկանց նկատմամբ հարգանքին, ապրումակցմանն ու արժանապատվությանը,կամային որակների ձևավորմանը:

Այսօր արդիական է, ժամանակի հրամայականն է անձնակողմնորոշիչ մոտեցումը, որի հիմքում աշակերտակենտրոն ուսուցումն է:Արժեքային իմաստավորում է ստանում անհատականացման սկզբունքը:Սովորողը պետք է գիտակցի իր ազատությունը, արժանապատվությունը, հանրային արժեքները:Նա պետք է իրեն համարի հասարակության լիիրավ, լիարժեք անդամ:

Արժեհամակարգի ձևավորումը գերակա խնդիր է, որովհետև դրա առանձնահատկությամբ է պայմանավորված աշակերտի դիրքորոշումն ու վերաբերմունքը իրականության, այս կամ այն երևույթի նկատմամբ:Արժեբանական կողմնորոշումները առաջատար դեր են խաղում գիտակցության ու վարքի ձևավորման վրա:

Խոսելով արժեհամակարգի մասին, չենք կարող չմեկնաբանել արժեք հասկացությունը:Այն համամարդկային մշակույթի արգասիքն է:

Մարդը գտնվում է ոչ միայն միջավայրում, այլ կերտում է ինքն իրեն:Արժեքները անձի հոգևոր ներաշխարհի անհրաժեշտ բաղկացուցիչներն են, կազմում են անձի

.դրդապատճառային ոլորտը

.պահանջմունքային ոլորտը

.գործունեությունը

.վարքը

.գիտակցությունը 18

Արժեքային համակարգի ձևավորումը բարդ և աշխատատար է, որովհետև այն առնչվում է անձի ներքին հոգևոր բաղադրատարրերին:Անձի ձևավորումը բերում է

նրա զարգացմանը, կայացմանն ու հասունացմանը:Անձի ձևավորումը անձի էության, հոգևոր ներաշխարհի նպատակաուղղված ու հետևողական հարստացումն է աշակերտի կողմից գիտելիքների անընդհատ յուրացմամբ, աշխարհի ճանաչումով ու բացահայտմամբ:

Կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորմանը ազդում են և կրթական ծրագրերը, և դասագրքերը, և ուսուցչի անձնային ու մասնագիտական որակները:Դպրոցը կատարում է սոցիալական, պետական պատվեր, որը պետք է համապատասխանի պետական կրթական քաղաքականությանը:Այն պարզ գիտակցումով, որ Հայաստանի Հանրապետությունը, Հայաստան աշխարհն ունի ազգային առանձնահատկություններ, տարածաշրջանային տարբեր խնդիրներ, որտեղ գերակայվում է պետություն-ընտանիք-դպրոց նպատակների համապատասխանությունը, որի գերնպատակը ազգային շահն է:Իսկ շահում ենք այն դեպքում,երբ ունենք

.գիտելիքներով,

.կարողություններով

. հմտություններով զինված,

.ազգային արժեքներ

.համամարդկային արժեքներ կրող քաղաքացիներ:

Այսօր մանկավարժին հնարավորություն է ընձեռված ազատ գործելու:Կրթության մասին օրենքով հաստատված է մանկավարժի ակադեմիական ազատությունը:Այդ ազատությունը պետք է օգտագործվի ի շահ ազգի, պետության, որի արդյունքում շահում են բոլորը՝ընտանիքը, դպրոցը, հասարակությունը, աշակերտը՝ ապագա:Շահում է սովորողը, որն իր մեջ կրում է արժեհամակարգի բաղկացուցիչներ, արժեհամակարգ, որը դառնում է.

. ուղղորդիչ նրա գործունեության համար

.դրդապատճառ նրա վարքագծի դրսևորմանը

.ամրակայում հստակ դիրքորոշումներ

.նպաստում աշխարհայացքի ձևավորմանը

Արժեհամակարգի յուրաքանչյուր տեսակ ներծծված է մեկը մյուսին, պայմանավորված են մեկը մյուսով , այդ միասնության մեջ այն դառնում է ավելի

ամբողջական: Այսինքն չենք կարող տարանջատել հայրենասիրությունը ազնվությունից, բարությունը առաքինությունից, գթասրտությունն արդարամտությունից ու խիզախությունից, չմեկտեղել հայրենասիրությունն ու մարդասիրությունը:Արժեհամակարգի տարբեր ներկայացուցիչներ խաչվում են տարբեր ուղիներում, երբեմն՝ հատվում, երբեմն՝ զուգահեռվում, բայց ոչ երբեք հակասվում:

Արժեհամակարգի առկայությունը մեր գոյության անբաժանելի ու անքակտելի մասն է ՝ սկսած կրտսեր դպրոցականից մինչև կյանքի մայրամուտ հանգրվանած յուրաքանչյուր ոք:Այն ուղղորդիչ է, արժևորում, զարդարում, պաշտպանում ու հարստացնում է մեր կյանքը, տանում է դեպի նպատակների իրականացում, դեպի ճշմարտություն, դեպի լույս ու հաղթանակ:Դրանով իմաստավորվում է մեր կյանքը, ստիպում անդադար կատարելագործվել և մղվել բարոյականության իմաստուն ու առաքինի աշխարհ:

Այսպիսով՝արժեհամակարգը նպաստում է անձի ձևավորմանն ու զարգացմանը, այն կարող է իրագործվել և դառնալ դասի բաղկացուցիչ ինչպես հանպատրաստի, այնպես էլ նախապես պլանավորված, այն պետք է կիրառել՝ հաշվի առնելով կրտսեր դպրոցականի անձնային, անհատական, ֆիզիոլոգիական, հոգեբանական առանձնահատկությունները, հաշվի առնել անհատականության սկզբունքները, հետաքրքրությունները, ձգտումներն ու կարողությունները:

Արժեհամակարգը պետք է ամրակայվի մտածելակերպի ու հոգեբանության մեջ, այլ ոչ թե որպես դասանյութ, որն իր կիրառումը չի գտնի առօրյա կյանքում ու կմատնվի մոռացության:Այն պետք է լինի անբռնազբոս ու իրական:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով էպոսի ուսումնասիրության արդյունքում մենք արժևորեցինք և կարևորեցինք արժեհամակարգի ձևավորումը, հայրենասիրությունը որպես համամարդկային ու համազգային նշանակություն ունեցող արժեք, քննադատական մտածողությունը, կրթության դերն ու նշանակությունը, հայ դպրոցի հիմնարար ազդեցությունը սովորողի զարգացմանն ու կատարելագործմանը:

Արժևորեցինք էպոսը որպես առանձնահատուկ ստեղծագործություն, խորհրդանիշ մեր ազգային նկարագրի, որպես հերոսական, վիպական, դյուցազնական հերոսպատում, որոնք մեր ժողովրդի ինքնաարտահայտման, երևակայության , ապագայի ու անցյալի մասին իրական ու անիրական պատկերացումներն են, որոնք այսօր կրկին արդիական են, բխում են ժամանակակից մարտահրավերներից: Մեր ժողովրդի առջև ծառացած են խնդիրներ, որոնց պատասխանները երբեմն տալիս են էպոսի հերոսները, անհրաժեշտ է կրթել ու դաստիարակել հայրենասեր, նվիրյալ, գիտակից, համարձակ ու խելացի մարդիկ, ովքեր իրենց ուսերին կկրեն ազգային պատկանելության, հայ լինելու և հայ մնալու պարտավորությունը:

Էպոսի դասավանդման, ուսումնասիրման և յուրացման, տարաբնույթ մեթոդների կիրառման վերջնարդյունքում մենք կունենանք հետևյալ պատկերը.

*Աշակերտները բանավոր կերպով կկարողանան գրագետ հաղորդակցվել, յուրացնելով էպոսի ոճային առանձնահատկությունը.

*կկարողանան իրողությունները քննադատորեն և բազմակողմանի ուսումնասիրել, վերլուծել, ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառել

*Կձևավորվի նրանց մոտ համակարգային և ինտեգրված մտածողություն

*Նրանց մոտ կձևավորվի վստահություն սեփական ուժերի հանդեպ,

*Կդրսևորվի հարգանք, ազնվություն, պատասխանատվություն, սոցիալական հարաբերություններում կգործեն կռուցողական և համերաշխ, ընկերակցելու ունակություն, կոնֆլիկտների խաղաղ և համագործակցային կարգավորման հմտություններ:

*Նրանք կարժևորեն մարդու կյանքն ու արժանապատվությունը, սեփական քաղաքացիական պարտքը , կգերադասեն նաև ազգային ու պետական շահը:

*Նրանց մոտ կձևավորվեն ինքնուրույն որոշումներ կայացնելու, դրանք իրագործելու հմտություններ:

*Նրանք կարժևորեն, կճանաչեն հայ մշակույթն ու մարդկային քաղաքակրթությունների մշակութային բաղադրիչները, որպես մարդկային զգացմունքների և գործողությունների կողմնորոշիչներ:

*Սովորողները կարժևորեն սեփական ինքնությունը,

*Սովորողներն ի վիճակի կլինեն զարգացնել սեփական մշակութքային ու գեղագիտական պատկերացումները, արժևորելով հոգևոր և նյութական ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը, ճանաչելով հայ և համաշխարհային գրականությունն ու արվեստը, նրանց մոտ կձևավորվի մշակութային գրագիտություն և ճաշակ:

Օգտագործված Գրականության ցանկ

1.Սասնա ծռեր, Պատառիկներ, Երևան 2014

2.Սասնա տուն, Հայ ժողովրդական դյուցազնավեպ, Մկրտիչ Խերանյան

3.Սասունցի Դավիթ, Լուսակն, էպոս-եր.2007

4.Յու .Ա.Ամիրջանյան, Ա.Ս.Սահակյան, Մանկավարժություն , ուսումնական ձեռնարկ մանկավարժական բուհերի ուսանողների համար:Մանկավարժ հրատ.Երևան 2005

5.http://books.panarm.info/%D5%BD%D5

6.http://books.panarm.info/%D5%BD%D5

7.armgeo.am